

արդեն ծանօթ էր Աղաճանեան Ուսուցչապետի անունը, համալսարանի երկարամեայ դասաւանդութիւններով հոգակուած, աւելի եւս կ'ամբանային այդ սիրալիր կապերը:

1936ի Հոկտ. 18ին, Ս. Ղազարու Մայրավանքին մէջ, Գերպոյ. Աղաճանեան եպիսկոպոս՝ վեց նորընծայ օծեալներ կը նուիրէր սուրբ Սեղանին:

1937ին, հազիւ բարձրացած Կաթողիկոսական դահլ, իր առաջին դործերէն մէկը կ'ըլլար պաշտօնական աղերսադիր մը ուղարկել առ Ս. Գահը, ստորագրութեամբ Պատրիարքութեան բոլոր Եպիսկոպոսներուն, ի նպատակ դատի երանացուցման Մխիթար Արքային:

1945ին, պատերազմի աղէտներէն ետք, սիրով կու գար Ս. Ղազար, յանձն առնելով տաժանադին ու երկար ճամբորդութիւն մը (Հոռոմ - Միլան - Վենետիկ), սիրով եւս համար Մխիթարի զաւակները եւ անոնց յարկերուն տակ ապաստանող պատերազմի արհաւիրքներէն հազիւ ճողպրած հարիւրաւոր դաղթական հայորդիները:

1946ին, նորընտիր Ծիրանաւոր Աղաճանեանին յարգանքի կ'ելլէր ամբողջ Միաբանութիւնը, Հոռոմի մէջ, հայ ծէսին հարադատութեամբ պանծացնելու Սիբասեան մատրան հանդէսները: Այդ առթիւ էր որ Մխիթարեան ձեմարանի Պատուոյ Նախագահի բարձր տիտղոսը կը տրուէր Ծիր. Աղաճանեանի, առանձին հանդէսով մը:

1950ի Սեպտեմբերին, դարձեալ կը տեսնենք զինք Ս. Ղազարու մէջ, նախագահելու Մխիթար Արքային մահուան Բ. դարադարձի մեծ հանդէսներուն, ուրիշ երեք Արքեպիսկոպոսներու հետ:

1958ի Ապրիլին, Ս. Մարկոսի ամպիրոնէն կը քարոզէ բազմահազար խալաքներու, Մուրատ Ռափայէլեանի զահլիճին մէջ կ'ողբելոյէ նահատակներու յիշատակը, Մխիթար Արքային յարկին տակ կը պանծացնէ մեծ Սեբաստացիին զործը:

Այդ բարեպատէս առիթով էր որ, վա-

նական շրջանակի մէջ տօնելով Ծիր. Հայրապետին Պատրիարքութեան քսանամեայ դործունէութիւնը, Ուխտիւ Ընդհ. Արքային՝ Գերպոյ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան կը վերակոչէր Ն. Վ. Տէրութեան «Մեծամեծ գործերը, սիրած անբաւ բարիքները, կատարած շինարար գործերը՝ Հայ Կաթողիկէ համայնքը օծտելով նոր եկեղեցիներով, դպրոցներով, կղերանոցներով, նոր քեմերու հաստատութեամբ եւ մամուլով», ու մաղթանքի անկեղծ զգացումներ կը յայտնէր Ծիր. Հայրապետին, «որ իբրեւ նշմարիտ հովիւ քրիստոսական հօտին, խօսած էր տոհմային Հայրապետներու լեզուով եւ շնորով, առաջնորդելու համար Հայ ժողովուրդը դէպի Աւետարանի լոյսը, դէպի իրական երջանկութիւնը»:

1959ի Նոյեմբեր 18ին, երբ բանաստեղծութեան մը համար կու գար Վենետիկ, սիրալիր այցելութեամբ մը կը պատուէր ու կը մխիթարէր Միաբանութեան բոլոր անդամները անդամ մը եւս:

1962ի Օգոստոսին պաշտօնապէս կու գար Հոռոմէն, բերելով Սրբ. Պապին Յովհաննէս ԻԳ.ի օրհնութեան գիրքն ու նուէրները, նախագահելու Մխիթար Արքային պղնձէ նորակերտ արձանի բացման հանդէսին: Այդ օրը մեծ ուրախութիւնն ալ ունեցանք իր Հայրապետական Աջէն օծուած տեսնելու երիտասարդ երկու նորընծաներ եւս, որոնք կու գային Մխիթարեան երգութեաներու ոյժ երբ թարմացնելու:

Այս բոլորին դիմաց, հանուր Կաթողիկէ հայութեան հետ, կու գանք երախտագէտ սրտով հայցելու իր հայրական օրհնութիւնը, որ մեղի համար զբաւական մ'է ապագայ նուաճումներու. վստահացնելով միաժամանակ թէ անպակաս պիտի ըլլայ մեր ալ խոնարհ աղօթքը վասն կենաց Հայրապետին, երկար ու արդիւնալից դործունէութեան մը անկեղծ ու սրտաբուլի մաղթանքներով:

Հ. Ն. Տ. Ն.

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԻԳՆԱՏԻՈՍ - ՊԵՏՐՈՍ ԺԶ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԷ ԿԹՂ. ՆԱՅՈՑ

Ն. Վ. Տ. Ծիրանաւոր Գրիգոր-Պետրոս ԺԶ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքի հրաժարականէն վերջ, հայ կաթողիկէ համայնքին Եպիսկոպոսական սինոդոսը կը զուգարուէր Պէյրութի Պատրիարքարանի եկեղեցւոյն մէջ, ինը Եպիսկոպոսներով, 1962ի Սեպտ. 2ին: Յաջորդ առաւօտն իսկ, երկրորդ քուէարկութեան, Կաթողիկոս-Պատրիարք կ'ընտրուէր Արհիպատիւ Այ. Արք. Պաթանեան, որ արդէն իսկ 25 տարիէ ի վեր կը վարէր Պատրիարքական Ընդհ. Փոխանորդի, եւ 1958էն ստղին՝ Տեղապահի բարձր պաշտօնները:

Արհիպատիւ Պաթանեան Արքեպիսկոպոս բարձրանալով Կաթողիկոսական դահլին վրայ, կ'ընտրէր սեփական անուն մը. Իգնատիոս Պետրոս ԺԶ:

Իգնատիոս անունը ընտրելով, կ'ողբէր յայտնել իր երախտագիտութիւնն ու սէրը հանդէպ Իգնատիոս Արքեպիսկոպոս Մարտիրի, որ 1915ին նահատակուեցաւ Մարտիրի իր բազմահազար ժողովուրդին հետ: Նորընտիր Կաթողիկոսն եւս Մարտիրոյն է ու նահատակ Արքեպիսկոպոսին թելադրութեամբ նուիրուած է եկեղեցական ասպարէզին:

Իսկ Պետրոս անունը նուիրական դարձած է բոլոր հայ կաթողիկէ Պատրիարքներուն, երկու դարէ ի վեր:

Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիւ Իգնատիոս Պետրոս ԺԶ. ծընած է Մարտին, 1899ի Փետր. 15ին:

Մկրտութեան անունով Արդիոս, փոքր տարիքէն կը նուիրուի Աստուծոյ ծառայութեան: Հեռանալով իր ծննդավայրէն, նախ Կ. Պոլսոյ Վեղարաւոր Հայրերու Կղերանոցին մէջ կը բոլորէ ուսումնական նախնական ընթացքը. ապա կ'անցնի Հոռոմի Քհնյայ. Լեւոնեան Վարժարանը, եւ հետեւելով համալսարանական ընթացքներու, փայլուն յաջողութիւններով կ'ընդունի փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան վարդապետական զոյգ աստիճանները:

Նահատակ ծնողներու զաւակ, Արդիոս Պաթանեան, 1921ի Յունիս 29ին կը դառնայ նահատակ Աստուծոյ սուրբ սեղանին, քահանայական օծութեամբ:

Նորընծայ վարդապետ Գեր. Արդիոս Պաթանեանի առաջին առաքելավայրը կ'ըլլայ Եպիսկոպոս, ուր ցոյց կու տայ մեծ նուիրում եւ փայլուն կարողութիւններ:

1929ին կ'անցնի Պաղտատ, իբր օգնական Յակոբ Արքեպիսկ. Նեսիմեանի, որուն կը յաջորդէ 1933ին, Մարտինի Աթոռին վրայ:

Պաղտատի մէջ, երիտասարդ Պաթանեան Արքեպիսկոպոս շինարարական ու կազմակերպչական կարեւոր դործեր առաջ կը տանի. իր ժամանակէն է Քարրատայի հայ կաթողիկէներու զեղեցկաչէն եկեղեցին:

1938ին, Ամենապատիւ Աղաճանեան նորընտիր Կթղ. Պատրիարքը զինք կը հրաւիրէ Պէյրութ, իբր Պատրիարքական

Փոխանորդ, ժամանակի մը համար. բայց
չուտով ժամանակաւորը կը դառնայ մնա-
յուն պաշտօն. այնպէս որ Վսեմ. Ծիր.
Աղաճանեանի բաղմամեայ Պատրիարքու-
թեան կապուած կը մնայ Ընդհ. Փոխա-
նորդ Արհ. Պաթանեան Արքեպիսկոպոսի
անունը եւ բաղմամեայ վաստակը:

1952ին, Արհ. Պաթանեան Արքեպիսկոպոսի կը յանձնուի նաեւ Հալէպի Թեմին Առաջնորդութիւնը: Քաղաքական դժուարին պայմաններու մէջ՝ կը հանդիսանայ պարագլուխ Հալէպի կաթողիկէ ալլաճէս եպիսկոպոսներուն:

1959ին, Արհ. Պաթանեան, առաքելա-
ջան վաստակներով ու հովուական փոր-
ձառութեամբ լիարեոն՝ կը վերադառնայ
Պէյրուսի, Պատրիարքական Տեղապահի
բարձր պաշտօնով, վարելու պատրիար-
քական իրազօր իշխանութիւնը՝ ի բացա-
կայութեան Վսեմ. Կաթողիկոս-Պատ-
րիարք Ծիր. Աղաճանեանի :

1962ի Սեպտ. 3ին, Ծիրանաւոր Աղա-
ճանեանի հրաժարումէն ետք, կ'ընտրուի
կաթողիկոս-Պատրիարք Կաթողիկէ Հա-
յոց Տանն Կիլիկիոյ: Իսկ Սեպտեմբեր
16ին, Խաչվերացի տօնին օրը, տեղի
կ'ունենայ նորընտիր կաթողիկոսին դա-
հակալութեան եւ քօղադրութեան յուղիչ
հանդէսը, մեծ շուքով:

Նոյեմբերի 18ին, Ն. Ս. Յուլհաննէս
ի Գ. Սրբ. Գահանայապետը, ի ներկա-
յութեան հայ կաթողիկէ բոլոր եպիսկո-
պոսներուն, սուրբ պալիում կը շնորհէ
նորընտրի կաթողիկոսին, ուղղելով զնա-
հատանքի սրտազեղ խօսքեր եւ բաշխելով
առաքելական օրհնութիւն:

Նորընտիր Գերերջանիկ Հոգեւոր Տէրը
չառ սերտ յարաբերութիւններ ունի աղ-
գային, Լիբանանեան եւ Սիւրիական պե-
տական շրջանակներու հետ եւ կը վայելէ
մեծ հեղինակութիւն: Հայերէնէն զատ,
հմուտ է լատիներէնի, իտալերէնի, արա-
բերէնի եւ ֆրանսերէնի: Նուիրուած Աս-
տուծոյ և Ս. Եկեղեցւոյ պայծառութեան,
գործօն նկարազրի տէր, հմուտ՝ ընկերա-
յին խնդիրներու, կը ներշնչէ նոր յոյսեր

ասպարազ վերելքի մը եւ փայլուն յաջողութեանց :

Իր կաթողիկոսութիւնը կը սկսի Տիեզերական ժողովի արշալոյսին, որ արշալոյսն է նաեւ քրիստոնեայ եկեղեցիներու միութեան՝ զեղեցիկ ականկալութիւններով առլցուն: Մենք կը մաղթենք որ նորընտիր կաթողիկոսին պարծանքն ըլլայ ստեղծել այն համերաշխ սրտակցութիւնը հայ կաթողիկէ եւ ոչ-կաթողիկէ համայնքներուն միջեւ, պատրաստելով հողիներն ու սրտերը՝ ընդառաջելու Քրիստոսի սրտաուռ իղձերուն, իսկական միութեան մը, Ս. Եկեղեցւոյ ծոցին մէջ, պահելով հանդերձ մեր ծէսին ու անդալին նուիրական աւանդութեանց բընիկ զբոյժը:

Մինչ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ա-
կընյալտնի կը նշմարուի եռուղեւ մը,
մանաւանդ բողոքական բաղմապան հա-
մայնքներու մէջ, եկեղեցական միութեան
հարցին նկատմամբ, եւ կաթողիկէներու
հետ ստեղծուած է մտերմութիւն մը փո-
խադարձ խորհրդակցութիւններով եւ
նոյնիսկ ծխական աղօթքներով, դժբախ-
տաբար հայ շրջանակներու մէջ տակաւին
հնոտի հոգեբանութիւն մը կը շարունակէ
դոյատեւել. ասոր փոխարէն՝ հարկաւոր
է, բարեկամական լաւազոյն յարաբերու-
թեանց դետնի մը վրայ, որ արդէն իսկ
մասամբ սկսած է Ծիր. Աղաճանեանի եւ
Զարեհ Ա. կաթողիկոսի շրջաններէն, ա-
ւելի սերտ ու սրտակից միութիւն մը հայ
կաթողիկէ եւ ոչ-կաթողիկէ եղբայրնե-
րու միջեւ, լուծելու համար հոգեբանա-
կան այն բոլոր դժուարութիւնները եւ
փարատելու համար այն ծայրայեղ ու սին
կասկածները, որոնք դոյացած են դարե-
բէ ի վեր, երկուստեք դործուած — ան-
կեղծօրէն պէտք է ընդունիլ ասիկա, Ն.
Ս. Յովհաննէս ԻԳ. Պապին հետ — սխալ-
ներով եւ յանցանքներով: Կը խորհինք թէ
մտքերու լուսաւորութեան հետ, մեր քով
ալ պէտք է կսի սրտերու եւ հոգիներու
պատրաստութիւնը՝ աղգային անուրանա-
լի արժէքներուն դիմաց զնելու համար



Եւ Երջանայր Սրբաբն Երբ Ելն-հատեալ,
Քաղաքսն-ը Երբայ (Երբ) Սրբաբն տեսն Կրթական-Վարժ

եկայք քանի որ ասորացի Զառուգիտիս.
 եւ Կրտսեր-ուսիք Էդդ-ուս ասորացի Զորքաւոցն-Քառն
 Զառուգիտի ասորացի Զորքաւոցն-Քառն ասորացի
 Էդդ Զառուգիտի ասորացի Զորքաւոցն-Քառն
 Զառուգիտի ասորացի Զորքաւոցն-Քառն

Занес. 10 к. М. Т. Р. 1962

+ Դիմադրու, Զեդրու Կ. Բաքուիսե

Քրիստոսի հոգիին հարազատ արժէքները
և անկէ բղխած պարտականութիւնները:

Ն. Ս. Յովհաննէս-ԻԳ. Սրբգ. Պապին
ըսածին համաձայն՝ հարկ է վերցնել այն
բոլոր արդելքները որ քրիստոնեաները ի-
րարմէ կը բաժնեն, և խորհիլ լրջօրէն այն
կէտերուն վրայ՝ որ կրնան զանոնք սերտ
միութեան մը առաջնորդել:

Այս վսեմ զաղափարականին իրակա-
նացման համար՝ հարկաւոր է փոխադարձ
սէր ու յարգանք ոչ միայն անձերու, այլ
նաեւ արժէքներու, որոնք անուրանալի-
րէն կան երկու կողմերուն մէջ ալ: Հար-
կաւոր է մանաւանդ աղօթքը. աղօթք
հասարակաց, եկեղեցիներու մէջ, աղօթք
փոխադարձ սիրոյ և եղբայրութեան
զղացումով օժուել: Հասած է ժամանակը
ալ զաղբեցնելու այն պառակտիչ ու
նախատական պժուալի դրականութիւնը,
որ կ'ուժացնէ հոգիները. հարկ է խոր-
հրդակցական զուգարումներով, եր-
կուսեք ներկայացուցիչներու համաժող-
ովներով, ուսումնասիրութիւններով,
Տիեզերական Ժողովին առնթեր, լրջօ-
րէն զբաղիլ միութեան հարցով, անոր
ներկայացուցած զժուարութիւններով,
պահանջած փոխադարձ զիջումներով,
միշտ բարեացակամ զղացումներով և
Քրիստոսի բաղձանքն իրադրծելու բու-
ռն տենչանքով:

Կը համարինք թէ միութեան հարցին
համար օգտաւատ ձեռնարկ մը պիտի ըլ-
լայ՝ ծխական զեռնի վրայ զոման աշ-
խատանք մը, մաքրելու համար մեր ծէսը

կարգ մը լատինաւանդ ներմուծումներէ,
որոնք դարերու ընթացքին մուտք դոր-
ծած են:

Տա՛ր Աստուած, որ Շնորհալիի տենչն
ու երազը իրականանար մեր օրերուն, և
նորընտիր Կաթողիկոս Ամենապատիւ Իզ-
նատիոս Պետրոս Ժ. Կարենար կատարել
անզուգական դեր մը՝ այդ ցանկալի միութե-
ան մէջ, և մենք ուրախութիւնն ունե-
նայինք Քրիստոսի սիրոյն և աստուա-
ծային անձառ յայտնութեան լոյսին տակ
միացած տեսնելու բոլոր հայերը: Այդ
օրն իսկապէս — և կը համարինք թէ չի
ուշանար ատիկա — խաղաղութեան և
սիրոյ սուրբ ողջոյնը պիտի ծածանի աշ-
խարհի չորս ծաղկերուն ցրումը հայերու
սրտին մէջ, որոնք մէկզի նետած ամէն
բաժանում ու քէն, զիրկընդխառնում
իրարու պիտի երգեն:

Թշնամութիւնն հեռացաւ

Սէր ընդ հաւուքս սփռեցաւ:

Նորընտիր Կաթողիկոսի զահակալու-
թեան առթիւ, մեր անկեղծ ու որդիական
շնորհաւորութեանց հետ, լաւագոյն մտղ-
թանքներով զեղուն, ահա իզմ մը նուր-
բական, զոր կը պարզենք սիրազեղ ու
խանդավառ զղացումներով, հայցելով Ս.
Հոգիին շնորհները հանուր հայութեան
վրայ, լիովին համոզուած՝ թէ եկեղեցւոյ
միութիւնը Աստուծոյ զործն է ամէնէն
առաջ, որուն մենք հայերս ալ պէտք է
բերենք մեր լայն զործակցութիւնը:

Հ. Ն. Տ. Ն.

ԶԱՐԵՀ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Փետրուարի վերջին օրերն էին՝ երբ
արտասահմանի թերթերուն մահազոյժ
սեւ շերտերը զբաւեցին մեր ուշադրու-
թիւնը. նոյն օրերուն Ս. Ղազար համոզ
ընտանեկան նամակներ ևս եկան հաս-
տատել սարսուղացիլ բոթը:

Զարեհ Ա. ոչ ևս է:

Այս ի՞նչ զժնէ փոթորիկ է որ կը դո-
ռայ Անթիլիասի Աթոռին վրայ, Աստ-
ուած իմ... ի՞նչ մահատարտու թախիծ
է որ կը ծաւալի Անթիլիասի Կաթողիկո-
սարանի զանգերէն:

Զարեհ Ա. ոչ ևս է: Ոչ ևս է պարթե-
ւահասակ կաղնին զօրաւոր, ոչ ևս է Վե-
հափառ Աթոռակալն ու տարաբախտ Կա-
թողիկոսը՝ վշտակիր Զարեհ Ա.:

Ու կայծակի արագութեամբ վիշտը կը
համակէ բովանդակ Պէյրութը, ողբա-
հրէշտակին թեւերով կը սլանայ ովկեան-
ներէն ալ անդին, Մասիսներէն մինչեւ
ծննդավայրն ողբացեալ Հայրապետին՝
մինչեւ Մարաշն ամայի ու կիսակործան:

Արցունքն ու կակիծը կը կարկամեցնէ
բերաններն ամէնուն, մինչ սրտերը կ'ող-
բան մեծ կորուստը երիտասարդ և ա-
ռոյգ Կաթողիկոսին:

Յաւալի լուրը կը հասնի Ս. Ղազար երբ
արդէն հոգին կը յանձնուէին վաստակա-
ւոր ու վշտաբեկ նշխարները Զարեհ Ա.
Կաթողիկոսին, և սուղի թախիծը կ'իջնէ
նաեւ Միթիթարի մենաստանին վրայ:

Միտանութեանս Ընդհ. Արրահայրը
Գերպոճ. Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլու-
հոճեան ցաւակցական նամակով մը կը
փութար իսկոյն իր և Միթիթարեան
Ուլստին վշտակցութիւնը յայտնելու Ան-
թիլիասի Կաթողիկոսարանին, այս անա-
կընկալ ու անդարմանելի կորուստին առ-
ջեւ՝ աղեկործան:

Բօթարեր սեւադրոշմ լրագիրը մեր
ձեռքին մէջ, երեւակայութեամբ վայրկե-
նաբար կը վերջիլէնք մօտաւոր անցեա-
լին մէջէն՝ բնորոշեան երկար սրայ-
քարները, օժման առթիւ տեղի ունեցած
վէճերն ու վերիվայրումները, հակառա-
կութիւններ, տարամբժ հոգեբանու-
թեան սեւ զիծեր, նախատական կե-
ցուածքներ, Լիբանանի եղբայրասպան
կոիւններ, Սիւրբական զէպքեր... և ա-
հա յանկարծ այդ բոլորը մահուան քրտ-
մընէլի պսակին մէջէն կը բերէին զէմ-
քը Զարեհ Ա. Գահակալին, զոր անդա-
լիօրէն կը կռչէնք վշտակիր Կաթողիկոս:

Ո՛րքան պիտի փափաքէինք, և ո՛րքան
պիտի փափաքէր նաեւ հանգուցեալ Կա-
թողիկոսը եղբայրութեան ուղիին մէջ՝
ազգային ու կրօնական սերտ միութեան
զրօշը պարզուած տեսնել ամէն հայ պա-
տահանի վրայ, հարուստին թէ աղքա-
տին, ու զործել, զործել և շինել հայ
սրտերուն մէջ, հայ վաճառանոցներուն
մէջ, առանց խտրութեան Գահի և Աթո-
ռի, իւրաքանչիւրին արժանաւոր պատիւն